



«ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ 2024 Թ-Ի ՊԱՐԶԵՑՎԱԾ ԲՅՈՒՋԵ: ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ»

ԵՐԵՎԱՆ 2025-26



ՓՄՁ Համագործակցության Աստիճան

Բովանդակություն

1. Նախաբան.....	3
1.1. Ծրագրի մասին (համառոտ):	3
1.2. Սննդի անվտանգությունն այսօր:.....	4
1.3. Փաստաթղթի նպատակը	6
2. Սննդի անվտանգության տեսչական մարմին (ՍԱՏՄ)	6
2.1. ՍԱՏՄ ծանոթագրություն	6
3. Պետական բյուջեի ձևավորում: Ընդհանուր ակնարկ	11
4. ՍԱՏՄ-ի 2024թ-ի բյուջեն:.....	12
4.1. Բյուջեի Ծախսային խմբերն ու կշիռներն ընդհանուրի մեջ	14
4.2. ՍԱՏՄ-ի բյուջեի փոփոխությունները ընթացիկ տարում.....	16
4.3. ՍԱՏՄ 2024թ-ի բյուջեի կատարողական:.....	17
5. ՍԱՏՄ Վերահսկողություն (ստուգումներ, դիտարկումներ):.....	19
5.1. 2024թ-ի ստուգումներն ամփոփ թվերով:.....	21
5.2. Հաճախ հանդիպող խախտումներ:	22
5.3. Ռիսկերի գնահատում կառավարում և վերլուծություն:	23
6. Վերահսկողություն: Թռչնամիս	24
6.1. Թռչնամիս ներմուծում:	25
6.2. Ներմուծման ռիսկեր: ՍԱՏՄ վերահսկողություն	26
6.3. Արտաքին կախվածություն և պարենային անվտանգություն	28
6.4. Թռչնամսի ինքնաբավություն: Միջազգային փորձ	29
7. Խնդիրներ/Առաջարկներ.....	30
7.1. Բյուջեին վերաբերող:	30
7.2. Սննդի վերահսկողություն: Թռչնամիս	31

1. Նախաբան

1.1. Ծրագրի մասին (համառոտ):

Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, Իրավաբանների հայկական ասոցիացիան, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը և Ագորա Սենթրլ Յուրոփ կազմակերպությունները համագործակցաբար իրականացնում են «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը (այսուհետ Ծրագիր¹):

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն և Ագորա Սենթրլ Յուրոփ կազմակերպությունների կոնսորցիումով գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:

Ծրագրի նպատակն է նպաստել պետական բյուջետային գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնմանը, խթանել մեր երկրում ներառական և թափանցիկ բյուջետային գործընթացները:

Այս հրապարակումը՝ **«Սննդի անվտանգության վերահսկողության 2024թ-ի պարզեցված բյուջե: Վերլուծություն»**, մշակվել է «ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա» ՀԿ-ի (այսուհետ ՓՄՁ Ասոցիացիա) կողմից, վերը նկարագրված Ծրագրի տրամաբանության ներքո և ներկայացնում է սննդամթերքի անվտանգության համար պատասխանատու տեսչական մարմնի 2024թ-ի պարզեցված բյուջեն և սննդամթերքի վերահսկողության շղթայի մասնակի վերլուծություն, որը ստեղծված է հանրության իրազեկման և կիրառության լայն շրջանակների համար:

Այս վերլուծությունում հատուկ առանձնացվել է Հայաստանում մսամթերքի, մասնավորապես թոչնամսի նկատմամբ վերահսկողությունը և անդրադարձ է արվել այդ ոլորտին:

Փաստաթղթում տեղ գտած տեղեկատվությունը հիմնականում հավաքագրվել է այդ մասին բաց աղբյուրներում առկա ինֆորմացիոն ռեսուրսներից, ՓՄՁ Ասոցիացիայի կողմից արված հարցումներին տված պատասխանների հիման վրա:

ԾԱՆՈՒՑՈՒՄ: Փաստաթղթում ներկայացված բովանդակության համար պարասխանադրություն է կրում «ՓՄՁ Ասոցիացիան» և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

¹ <https://budgets.am/>

1.2. Սննդի անվտանգությունն այսօր:

Սննդի անվտանգության համակարգը 21-րդ դարում դարձել է պետությունների ռազմավարական օրակարգերի կարևորագույն ուղղություններից մեկը: Այն այլևս չի դիտվում միայն առողջապահական ռիսկերի նվազեցման տեսանկյունից, այլ ընդգրկում է տնտեսության մրցունակությունը, արտահանման հնարավորությունները, սոցիալական կայունությունը, շրջակա միջավայրի ազդեցությունները և միջազգային առևտրային հարաբերությունները:

Հաշվի առնելով նաև մերօրյա սպառողների վարքագիծը, ովքեր այսօր ավելի ուշադիր են դարձել գնվող սննդամթերքի պիտակներին, մակնշմանը և առողջ սննդին, ապա սննդամթերքի ողջ շղթայի անվտանգության վերահսկողությունը նաև հանրության կարևորագույն պահանջարկն է դարձել:

Սննդամթերքի անվտանգությունն ապահովող համակարգերը ներառում են ամբողջական մատակարարման շղթան՝



ինչը պահանջում է ինտեգրված ինստիտուցիոնալ կառավարման մոդել, վերահսկողական մեխանիզմներ և ներդրված ստանդարտներ/սերտիֆիկատներ:

Սննդի անվտանգության ոլորտը կարևոր է միաժամանակ մի քանի հարթության վրա.

- ա) Հանրային առողջություն
- բ) Տնտեսական մրցակցություն և արտահանման շուկաներ
- գ) Սոցիալական կայունություն և վստահություն
- դ) Պետական անվտանգության բաղադրիչ (պարենային անվտանգություն)

եվ այլն:

Սննդային թունավորումներով, կամ անառողջ սննդով պայմանավորված հիվանդությունները շարունակում են մնալ աշխարհի առողջապահական համակարգերի ծանր բեռ: Ոլորտի արդյունավետ վերահսկումը կանխում է՝ հիվանդացության տեմպերի աճը, առողջապահական ծախսերի ավելացումը, աշխատուժի արտադրողականության կորուստը և այլ դիմադրողականության անկման ռիսկերը:

Միևնույն ժամանակ միջազգային շուկաներ մուտք գործելու համար պետությունները և արտադրողները պարտադիր անցնում են սերտիֆիկացման, հետազոտության և վերահսկողության ավելի խիստ գործընթացներ՝ համաձայն EU Sanitary and Phytosanitary (SPS)

և այլ նորմատիվ պահանջների: Ոլորտը դժվարացնում է տնտեսական մրցակցությունը, բայց հաղթում է ավելի որակյալ, ավելի վստահելի մատակարարը:

Սննդի անվտանգության համակարգի թափանցիկությունն ու վերահսկելիությունը ձևավորում են սպառողի վստահությունը: Իսկ վստահության անկումը բերում է շուկաների տատանման, սպառողական վարքագծի փոփոխության և սննդամթերքի պահանջարկի անկման:

Պետական անվտանգությունը, արտակարգ իրավիճակներում սննդամթերքի անվտանգությունն ու մատչելիությունը հանդիսանում են սոցիալական կայունության առանցքային գործոն, տվյալ պետությունների ինքնաբավության կամ ինքնիշխանության ցուցիչ: Սննդամթերքի մատակարարման շղթաների խափանումները կարող են հանգեցնել կոնկրետ սննդամթերքի դեֆիցիտի, պակասի, գների բարձրացման կամ համաճարակային ռիսկերի: Երկրների **պարենային անվտանգության** հարցերը մերօրյա նույնիսկ դիվանագիտական, կամ միջազգային հարաբերությունների համար կարևորագույն «խաղաթուղթ» են համարվում:

Վերջին տասնամյակում, գլոբալ միտումները սննդի անվտանգության ոլորտում ուղեկցվում են մի շարք փոփոխություններով, այդ թվում թվային լուծումներով (QR-կոդերը, blockchain համակարգերը և թվային սերտիֆիկացման հարթակները արդեն կիրառվում են մսամթերքի, ձկան, կաթնամթերքի և գյուղմթերքի շուկաներում): Թվայնացումը ներմուծվում է նաև լաբորատոր համակարգեր՝ արագացնելով հայտնաբերման մեխանիզմները և նվազեցնելով ռիսկերը:

Կանխարգելիչ միջոցառումները ևս կարևորվում են վերջին շրջանում զարգացած երկրներում: Անցում է կատարվում «վերահսկումից դեպի կանխարգելում» սկզբունքին՝ հիմնված HACCP, ISO 22000, FSMA և այլ մոտեցումների վրա:

COVID-ից հետո ուժեղացել է One Health մոդելը, որը միավորում է՝ կենդանիների առողջությունը, մարդու առողջությունը, շրջակա միջավայրը (այդ թվում կլիմայական փոփոխությունների ազդեցությունները): Սա դարձել է միջազգային ֆինանսավորման առաջնային ուղղություններից մեկը:

Կլիմայական փոփոխությունները առաջ են բերել նոր ռիսկեր՝ ջերմաստիճանի բարձրացում, ջրի պակաս, վնասատուների տարածման փոփոխություն, պաթոգենների միգրացիա: Միջազգային ոլորտային կառույցների՝ FAO²-ի, համար կլիմայական փոփոխությունների հետևանքներն ու ազդեցությունները սննդի որակի վրա ևս դարձել է քաղաքականությունների հիմնական ուղղություններից մեկը:

Սա այն ոլորտներից է, որտեղ քաղաքականությունը, տեխնոլոգիան, առևտուրը և հանրային առողջությունը գործում են մեկ դաշտում:

² <https://www.fao.org/home/en>

1.3. Փաստաթղթի նպատակը

Սույն փաստաթղթի նպատակն է գնահատել, թե ինչպես են սննդի անվտանգության վերահսկողության ինստիտուցիոնալ և բյուջետային գործառույթները փոխազդում սննդամթերքի շուկայի կառուցվածքի և մատակարարման դիմադրողականության հետ Հայաստանում:

Հայաստանի Հանրապետության սննդի անվտանգության համակարգը հանդիսանում է պետական քաղաքականության այն ոլորտը, որտեղ խաչվում են առողջապահական, տնտեսական, առևտրային և միջազգային պարտավորությունների բաղադրիչներ: Սննդի անվտանգության քաղաքականությունը ուղղված է անվտանգության ռիսկերի կանխարգելմանը, սպառողների պաշտպանությանը, ինչպես նաև կենդանիների և բուսական աշխարհի առողջության ապահովմանն՝ համապատասխանաբար անասնաբուժական և բուսասանիտարական ուղղություններով:

Փաստաթղթում առանձին անդրադարձ է արվել Հայաստանի թռչնամսի շուկային: Թռչնամիսը, որպես լայն սպառում ունեցող կենդանական ծագման սպիտակուց, Հայաստանում բարձր ներմուծման կախվածությամբ ապրանք է, ինչը բարձրացնում է ինչպես սննդի անվտանգության, այնպես էլ մատակարարման շղթաների կայունությունը վերաբերող ռիսկերը: Այս հանգամանքը պահանջում է ոչ միայն տեղական արտադրության և սպառման վերլուծություն, այլ նաև ինստիտուցիոնալ կարողությունների և կարգավորող շրջանակների դիտարկում:

2. Սննդի անվտանգության տեսչական մարմին (ՍԱՏՄ³)

2.1. ՍԱՏՄ ծանոթագրություն

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը (ՍԱՏՄ) վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող՝ ՀՀ կառավարությանը ենթակա տեսչական մարմին է, որն օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում՝ հանդես գալով ՀՀ անունից:

ՍԱՏՄ-ն ՀՀ-ում գործող, ՀՀ կառավարությանը ենթակա թվով 6 տեսչական մարմիններից մեկն է: Տեսչական մարմինների գործառույթների, դրանց կառավարման կարգի և լիազորությունների հիմնական դրույթները սահմանված են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով:

³ <https://www.snund.am/hy>

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին
Շուկայի վերահսկողության տեսչական մարմին	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	Կրթության տեսչական մարմին

ՍԱՏՄ-ի կանոնադրությունը, որով սահմանված են ՍԱՏՄ նպատակները, գործառույթները, լիազորություններն ու կառավարման կարգը, հաստատվել է ՀՀ վարչապետի 2019թ-ի թիվ 1940-Լ որոշմամբ⁴:

Բացի վերոգրյալից, ելնելով ՍԱՏՄ գործունեության ոլորտի առանձնահատկություններից ՍԱՏՄ-ի գործողությունների շրջանակը կարգավորվում են նաև «Սննդամթերքի անվտանգության մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին», «Կերի մասին», «Անասնաբուժության մասին», «Բուսասանիտարիայի մասին» օրենքների և իրավական այլ ակտերով:

➤ **ՆՊԱՏԱԿՆԵՐ:**

ՍԱՏՄ-ի նպատակներն են.

- ✓ օրենքով սահմանված դեպքերում և կարգով սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում անվտանգության և (կամ) ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

➤ **ԽՆԴԻՐՆԵՐ:**

ՍԱՏՄ-ի խնդիրներն են:

- ✓ Տեսչական մարմնի խնդիրներն են սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում:

⁴ <https://www.arlis.am/hy/acts/177907/latest>

➤ **ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**

ՍԱՏՄ-ի լիազորություններն են.

- ✓ Տնտեսավարող սուբյեկտների կողմից սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում վերահսկողություն իրականացնելը, դրա հետևանքով պատասխանատվության միջոցներ կիրառելը:
- ✓ Տվյալ ոլորտում իրազեկումներ և կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելը:
- ✓ Տվյալ ոլորտում տվյալների բազա հավաքագրելը, վիճակագրությունը վարելը, ոլորտում գործողների նկատմամբ լիցենզիաների կասեցնելը և այլն:
- ✓ Սննդային թունավորումների հայտնաբերման դեպքում պետական սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողություն իրականացնող մարմնի հետ համատեղ միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.
- ✓ Օտարերկրյա պետություններից կենդանիների կարանտինային, հատուկ վտանգավոր ու պարտադիր ծանուցման ինֆեկցիոն հիվանդությունների՝ ՀՀ տարածք ներթափանցումը կանխարգելող միջոցառումների կազմակերպումը և իրականացումը, այդ ուղղությամբ պետական և շահագրգիռ մյուս մարմինների հետ համատեղ և այլն:

➤ **ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ:**

ՍԱՏՄ-ի կառավարումը:.

- ✓ Տեսչական մարմինը կառավարում է ՀՀ վարչապետը և կառավարման խորհուրդը՝ որը բաղկացած է 10 անդամից (պետական և մասնավոր հատվածը միասին):
- ✓ ՀՀ վարչապետն է նշանակում/ազատում, խրախուսում/նկատողություն կիրառում տեսչական մարմնի ղեկավարին:
- ✓ Տեսչական մարմնի ղեկավարի, ղեկավարի տեղակալների թեկնածությունը ներկայացնվում է ՀՀ վարչապետի հաստատման կառավարման խորհրդի կողմից:
- ✓ Ամփոփ՝ Տեսչական մարմնի օպերատիվ կառավարումն իրականացվում է մարմնի ղեկավարի կողմից, իսկ ընդհանուր կառավարումը ՀՀ վարչապետի և տվյալ տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից:

➤ **ԲՅՈՒՋԵ:**

ՍԱՏՄ-ի բյուջեի ձևավորումը.

- ✓ ՍԱՏՄ-ի տարեկան բյուջետային հայտը կազմվում է հենց ՍԱՏՄ-ի կողմից:
- ✓ Տարեկան բյուջետային հայտի նախագիծը հաստատում է տեսչական մարմնի կառավարման խորհուրդը:
- ✓ Խորհրդի կողմից հաստատված բյուջետային հայտը ներկայացվում է ՀՀ վարչապետի աշխատակազմ:
- ✓ ՀՀ վարչապետի աշխատակազմը բոլոր 6 տեսչական մարմինների բյուջետային հայտերը միասին ներկայացնում է ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ծանոթագրություն:

2024թ-ի տարեկան բյուջեի հայտը ՍԱՏՄ կառավարման խորհրդի կողմից հաստատվել է խորհրդի թիվ 26 որոշմամբ 2023թ-ի նոյեմբերի 30-ին:

Չնայած նրան, որ արդեն 2023թ-ի նոյեմբերի 30-ին ընդհանուր ՀՀ 2024թ-ի բյուջեի մասին օրենքի նախագիծը ՀՀ վարչապետը նոյեմբերի 30-ի գրությամբ ուղարկել էր ՀՀ ԱԺ քննարկման, որն էլ ընդունվեց դեկտեմբերի 7-ին:


➤ **ՍԱՏՄ կառուցվածքը:**

- ✓ ՍԱՏՄ-ն ունի գլխամասային գրասենյակ որում ներառված են 11 ստորաբաժանումներ
- ✓ Մարզային 10 կենտրոններ
- ✓ Սահմանային հսկողության 5 կենտրոններ:

➤ **ՍԱՏՄ Հաստիքացուցակ:**

- ✓ Տեսչական մարմինն ունի 299 հաստիք, որից՝
- ✓ 4 մարմնի ղեկավարի և տեղակալների ղեկավար կազմ
- ✓ 33 քաղաքացիական
- ✓ 262 քաղ-ծառայողներ





ՍԱՏՄ-ի հաստիքացուցակը հաստատվում, փոփոխությունների ենթարկվում է միայն ՍԱՏՄ-ի կառավարման խորհրդի հաստատումով: Դիտարկվող՝ 2024թ-ի, համար հաստատված հաստիքացուցակը եղել է 299-ը:

Ծանոթագրություն:

2024թ-ի արդյունքներով ՍԱՏՄ-ի 299 հաստիքից համարված էր 247-ը, այսինք մոտ 83%-ը: Այդ թվում, ՍԱՏՄ սահմանային հսկողության օղակների 57 հաստիքից համարված է 47-ը միայն:

3. Պետական բյուջեի ձևավորում: Ընդհանուր ակնարկ

Ինչպես ամեն տարի, այնպես էլ 2024թ-ի համար ՀՀ պետական բյուջեն հաստատվել է նախորդ՝ 2023թ-ի տարեվերջին ՀՀ Ազգային ժողովի կողմից, որը ներկայացնում է հաստատման ՀՀ Ֆինանսների նախարարությունը օրենքի տեսքով: 2024թ-ի տարեկան բյուջեն ընդունվել է 2023թ-ի դեկտեմբերի 7-ին (ՀՕ-349-Ն)⁵:

Յուրաքանչյուր տարվա բյուջեն ներկայացնում է տվյալ տարվա ընդհանուր խմբերով տարվա սպասվելիք եկամուտները և պլանավորված ծախսերն ըստ ոլորտների: ՀՀ պետական բյուջեի մասին տվյալ տարվա օրենքին կից առանձին նաև ներկայացված է լինում կանխատեսվելիք եկամուտների աղբյուրը, դեֆիցիտի (պակասուրդ) չափը և ծախսերն արդեն առանձին-առանձին՝ ըստ ոլորտների, տվյալ օրենքին կից հավելվածներով: Տվյալ օրենքի նախագիծը ներկայացնելիս, ներկայացվում է նաև բյուջեի ուղերձը, որում տեղ են գտնում հիմնական ուղերձները թե ինչպիսի բյուջե է սպասվում:

Արդեն ընթացիկ տարվա ընթացքում ևս անհրաժեշտություն է լինում և կատարվում են օրենքի փոփոխություններ, կամ ՀՀ կառավարության որոշումներով բյուջեի վերաբաշխումներ՝ այսինքն կոնկրետ գերատեսչությանը հատկացված բյուջեի տողերում փոփոխություններ ավելացումների կամ պակասեցումների տեսքով: Այդ փոփոխությունները հիմնականում պայմանավորված են լինում արտակարգ իրավիճակներով (Covid, պատերազմ, ջրհեղեղ և այլն), կամ սխալ պլանավորելու հետևանքով, կամ նոր երևան եկած այլ հանգամանքներով :

Ծանոթագրություն:

2024թ-ի համար ընդունված տարեկան բյուջեի մասին ՀՕ-349-Ն օրենքը, ընդունումից հետո, մեկ տարվա ընթացքում, օրենսդրական փոփոխությունների է ենթարկվել և ՀՀ ԱԺ-ի կողմից հաստատվել է մոտ 200 անգամից ավելի օրենսդրական նախագծերով:

Հայաստանի Հանրապետության 2024 թվականի համախմբված բյուջեն՝

- 1) եկամուտների գծով՝ 2,815.1 մլրդ դրամ,
- 2) ծախսերի գծով՝ 3,298.0 մլրդ դրամ,
- 3) դեֆիցիտը (պակասուրդը)՝ 482.9 մլրդ դրամ.

⁵ <https://www.arlis.am/hy/acts/202734/latest>

2024թ-ի համար հաստատված ՀՀ պետական բյուջեն ընդհանուր թվերով՝

Աղյուսակ_1

Հոդված	Գումարը
1. Եկամուտների գծով	2,7 տրիլիոն
2. Ծախսերի գծով	3,2 տրիլիոն
3. Դեֆիցիտը (պակասուրդը)	482,9 մլրդ

2024թ-ի համար հաստատված ՀՀ պետական բյուջեի եկամուտները թվերով՝

Աղյուսակ_2

Պետական բյուջեի եկամուտները	Գումարը
Ընդամենը՝	2,7 տրիլիոն
այդ թվում՝	
Հարկային եկամուտներ եվ պետական տուրքեր	2,6 տրիլիոն
Պաշտոնական դրամաշնորհներ	22,2 մլրդ
Այլ եկամուտներ	87,6 մլրդ

4. ՍԱՏՄ-ի 2024թ-ի բյուջեն:

Ինչպես արդեն ներկայացվել է վերոգրյալ, ՍԱՏՄ-ն, այնպես էլ ՀՀ-ում գործող բոլոր տեսչական մարմինները, իրենց ծախսային բյուջետային հայտերը, հաստատված տվյալ մարմնի կառավարման խորհրդի կողմից, նախօրոք ներկայացնում են ՀՀ կառավարության աշխատակազմ, որն էլ իր հերթին ներկայացնում է ՀՀ ֆինանսների նախարարություն ընդհանուր տարեկան բյուջեում ներառելու համար:

Տեսչական մարմինների տարեկան գործողությունները գնահատվում են իրենց իսկ կողմից ներկայացված, տվյալ տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից հաստատված տարեկան գործողությունների ծրագրի և հաստատված բյուջետային հայտի կատարողականներով:

Բնական է, որ տեսչական մարմինների բյուջետային հայտերը հիմնականում ծախսային են և դրանց ծախսային խմբի մեծ մասը կազմում է տվյալ գերատեսչության պահպանման

ծախսերը: Իսկ տեսչական մարմինների հիմնական գործառույթները դա վերահսկողական, կանխարգելիչ միջոցառումներն են:

Բոլոր 6 տեսչական մարմինների համար նախատեսվող տարեկան բյուջեի ծախսերը, պետական բյուջեի մասին օրենքին կից ծախսային հավելվածում դասակարգված են 1213 ծրագրային դասիչի ներքո: 2024թ-ի համար բոլոր տեսչական մարմինների հաստատված բյուջեները ստորև՝

Գծապատկեր_1

Ծրագրային դասիչ 1213	Ընդհանուր բյուջե՝ մոտ 7,1 մլրդ, որից
Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	-2,2 մլրդ.
Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին	-1,6 մլրդ.
Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին	-1,4 մլրդ.
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	- 1,1 մլրդ.
Շուկայի վերահսկողության տեսչական մարմին	- 0,5 մլրդ.
Կրթության տեսչական մարմին	-0,3 մլրդ.


ՍԱՏՄ-ի 2024թ-ի համար հաստատված բյուջետային հայտը կազմել է մոտ 2,2 մլրդ դրամ:

Որից ծախսային մեծ խմբերն ունեցել են հետևյալ տեսքը՝

Ընդամենը մոտ 2,2 մլրդ, որից՝

- Տեսչական մարմնի պահպանման, հիմնական գործառույթների իրականացման (այդ թվում անձնակազմի աշխատավարձ) համար նախատեսված ծախսեր – 1,7 մլրդ
- Տեսչական վերահսկողության շրջանակում սննդամթերքի լաբորատոր հետազոտություն՝ 34,7 մլն
- Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների, կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի վերահսկողության իրականացում՝ լաբորատոր փորձարկումների միջոցով՝ 326,2 մլն
- Դաբաղ հիվանդության դեմ պատվաստումների իրականացման վերահսկողություն՝ 20,2 մլն
- Գյուղատնտեսական մշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների վերահսկողություն՝ լաբորատոր փորձարկումների միջոցով՝ 27,8 մլն
- Կենդանական ծագման մթերքում մնացորդային նյութերի վերահսկողություն՝ 55,8 մլն
- Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տեխնիկական հագեցվածության բարելավում՝ 43,2 մլն:

ՍԱՏՄ 2024թ-ի բյուջեի ծախսային խմբերը



ՍԱՏՄ-ի 2024թ-ի բյուջեի մեծ մասը բաժին է ընկնում տեսչական մարմնի աշխատակիցների աշխատավարձին եվ դրանից բխող պարտադիր վճարներին: Նախատեսված 2,2 մլրդ-ից 1,7 մլրդը, կամ բյուջեի 77%-ը նախատեսված է եղել տեսչական մարմնի պահպանման ծախսերին:

Պահպանման ծախսերից մոտ 1,5 մլրդ-ը Աշխատավարձ/Պարգևավճարներ հոդվածն է, կամ ընդհանուր բյուջեի՝ մոտ 68%-ը, կամ պահպանման ծախսերի մոտ 88%-ը:

4.1. Բյուջեի Ծախսային խմբերն ու կշիռներն ընդհանուրի մեջ

ՍԱՏՄ-ի 2024թ-ի տարեկան բյուջեի պահպանման ծախսերի 1,7 մլրդի մեջ ներառված աշխատավարձին ուղղվող ծախսերից բացի, այն իր մեջ ներառում է՝


- Ծառայությունների ձեռքբերում՝ - 195,2 մլն կամ ընդհանուր բյուջեի մոտ 8,8% Որից՝
 - ✓ Նյութեր ապրանքներ - 61,9 մլն՝ ներառյալ 33,8 մլն տրանսպորտային միջոցների վառելիք
 - ✓ Պայմանագրային այլ ծառայություններ -59,1 մլն՝ ներառյալ 39,2 մլն համակարգչային ծառայություններ
 - ✓ Կոմունալ եվ այլ -29,5 մլն

ՍԱՏՄ ընդհանուր բյուջեի մեջ, տեսչական մարմնի պահպանման ծախսերից բացի, հաջորդ մեծ բյուջեն ծախսային բաժինը լաբորատոր ծառայություններն են, որը ներառում է՝

- Լաբորատոր ծառայություններ – 464,8 մլն կամ ընդհանուր բյուջեի մոտ 20% Որից՝

- ✓ Գյուղ. Կենդանիների լաբ. փորձարկումներ...-326,2 մլն
- ✓ Դաբաղ հիվ. Պատվաստումների -20,2 մլն
- ✓ Տեսչական վերահսկողության...- 34,2 մլն
- ✓ Գյուղ. Մշակաբույսերի...- 27,8 մլն
- ✓ Կենդ. Ծագման մնացորդ-55,8 մլն
- ✓ և այլն:

Գծապատկեր_3




ՍԱՏՄ-ի վերջին երեք տարիների տարեկան բյուջեների համեմատականը ուսումնասիրելիս, արձանագրում ենք մոտ 10 տոկոս աճ՝ 2023-25թթ-ի համեմատությամբ: Ծախսային խմբերի ոչ էական փոփոխություններով այն ունեցել է հետևյալ թվային տեսքը.

2023թ-ի համար՝	-	Ընդհանուր բյուջե - 2 218 789,9 հազ դրամ
2024թ-ի համար՝	-	Ընդհանուր բյուջե - 2 241 458,8 հազ դրամ
2025թ-ի համար՝	-	Ընդհանուր բյուջե - 2 446 433,8 հազ դրամ

ՍԱՏՄ-ի ընդհանուր բյուջեի վերջին երեք տարիների աճին զուգահեռ, էական չի փոփոխվել բյուջեի հիմնական մեծ խմբերով ծախսային խմբերի մասնաբաժինը:

2023/24/25 ՍԱՏՄ բյուջեն և ծախսային մեծ խմբեր



4.2. ՍԱՏՄ-ի բյուջեի փոփոխությունները ընթացիկ տարում

ՍԱՏՄ-ի 2024թ-ի համար հաստատված բյուջեն ևս փոփոխվել է արդեն ընթացիկ տարում: Ընդհանուր, վերջնական հաշվով (պակասեցումներ/ավելացումներ միասին վերցրած) այն մոտ 150 մլն դրամով ավելացել է նախօրոք պլանավորվածից և 2023թ-ին ՀՀ ԱԺ-ի կողմից հաստատումից հետո: Հիմնական ավելացումները եղել են ՍԱՏՄ-ի պահպանման ծախսերում (աշխատավարձեր և այլն), լաբորատոր փորձաքննությունների և այլ ծառայությունների ձեռք բերելու համար: Ընդ որում, ուշադրության է արժանի, որ բյուջեի փոփոխություններով ավելացվել են այնպիսի ծառայությունների, լաբորատոր փորձաքննությունների բյուջեներ, որոնց համար տարեկան հաստատված բյուջեում ընդհանրապես ծախս/բյուջե նախատեսված չի եղել:

ՍԱՏՄ-ի 2024թ-ի համար հաստատված 2 241 458,8 (հազ դրամ) բյուջեն ընթացիկ տարում փոփոխվել/ավելացել է մոտ 150 մլն դրամով և 2024թ-ի ՍԱՏՄ-ի տարեկան ճշտված բյուջեն կազմել է 2 391 625,3 (հազ դրամ): Տես աղյուսակ 3-ը:

Ծրագրի միջոցառում/ հոդված	Տարեկան պլան	Կատարված փոփոխություններ	Տարեկան ճշտված պլան
ԸՆԹԱՅԻՎ ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ	1 733 415,4	12 256,9	1 745 672,3
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	1 537 050,0	37 000,0	1 574 050,0
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՈՒՄ	195 236,8	(24 743,1)	170 493,7
Գրասենյակային նյութեր և հագուստ	21 569,4	(2 974,4)	18 595,0
Տրանսպորտային նյութեր	33 800,0	7 879,6	41 679,6
Տեսչական վերահսկողության շրջանակում սննդամթերքի լաբորատոր	34 697,4	9 850,0	44 547,4
Ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական	-	48 074,1	48 074,1
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	-	23 921,8	23 921,8
Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություններ	-	9 941,5	9 941,5
Բուսական ծագման մթերքում մնացորդային նյութերի վերահսկողություն	-	45 000,0	45 000,0
Նախորդ տարիների պարտավորությունների մարման նպատակով	-	26 192,1	26 192,1
Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տեխնիկական հագեցվածության բարելավում	43 228,0	(1 148,1)	42 079,9

4.3. ՍԱՏՄ 2024թ-ի բյուջեի կատարողական:

Ինչպես ընդհանուր ՀՀ պետական բյուջեն, այնպես էլ առանձին դրանում հատկացված բյուջեների առանձին գերատեսչությունների համար, տարվա վերջ չափվում են վերջիններիս կազման և իրականացման արդյունավետությունն ըստ իրենց կատարողականի: Տվյալ գերատեսչության համար նախատեսված տարեկան բյուջեն, տարվա վերջին պետք է ամբողջովին ծախսված լինի, որպեսզի համարվի, որ այդ գերատեսչությունը ճիշտ է պլանավորել իր տարեկան բյուջեի ծախսերը և դրանք իրականացրել պատշաճ՝ կատարել է բյուջեն: Լինում են դեպքեր (ինչպես եվ որ եղել է ՍԱՏՄ-ի դեպքում 2024թ-ի համար), երբ արդեն հաստատված տարեկան **բյուջեն փոփոխության** է ենթարկվում՝ ավելացվում/պակասեցվում: Չնայած դրան, տարվա վերջին, տվյալ գերատեսչության կատարողականը միևնույն է, չափվում է փոփոխված բյուջեի՝ այս դեպքում ծախսային մասի ամբողջովին կատարված լինելու փաստով:

ՍԱՏՄ-ի 2024թ-ի բյուջեի կատարողականը կազմել է 94,6 %:

Ընդհանուր				
Տարեկան պլանով հաստատված	Փոփոխված (հազ դրամ)	Տարեկան ճշտված պլան (հազ դրամ)	Փաստացի ծախսված (հազ դրամ)	Կատարողականի տոկոսը տարեկան ճշտված պլանի նկատմամբ %
2 241 458,8	150 166,5	2 391 625,3	2 262 777,7	94,6%

2024թ-ի ՍԱՏՄ տարեկան բյուջեի ամենաբարձր կատարողականով ծախսային խումբը եղել է տեսչական մարմնի պահպանման ծախսերը՝ 1,7 մլրդ, որի կատարողականը եղել է 98,8 % (որը ներառում է աշխատավարձերն ու դրանց հավասարեցված ծախսերը՝ 100%):

Իսկ ամենացածր կատարողական ունեցող մեծ խմբի ծախսերից եղել է «Ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի տեղափոխման և ոչնչացման ծառայություններ» բյուջեն՝ 48,1 մլն, որի կատարողականը եղել է 7,5%:

Ուշադրության է արժանի այն, որ տվյալ ծառայությունների համար 48,1 մլն դրամ բյուջեն այն փոփոխություններից է, **որն ավելացվել է արդեն ընթացիկ տարում**, բայց ինչպես տեսնում ենք կատարողականի ամփոփման ցուցանիշներում, այն վաստակել է ցածր՝ 7,5 տոկոսանոց կատարողական:

ՍԱՏՄ 2024թ-ի տարեկան բյուջեի հիմնական ցուցանիշները, դրանց փոփոխություններն ու կատարողականը (%), ստորև աղյուսակով:

Աղյուսակ_4

Ծախսային հոդված	Տարեկան պլան	Կատարված փոփոխությ ուններ	Տարեկան ճշտված պլան	Փաստացի ծախսված	Կատ. %-ը ճշտ. պլանի նկատ.
Ընդամենը՝	2 241 458,8	150 166,5	2 391 625,3	2 262 777,7	94,6
Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականագման ծառայություններ	1 733 415,4	12 256,9	1 745 672,3	1 724 855,6	98,8
Աշխատանքի վարձատրություն	1 537 050,0	37 000,0	1 574 050,0	1 574 048,6	100,0
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	1 240 997,8	37 000,0	1 277 997,8	1 277 997,8	100,0
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ	101 178,3	-	101 178,3	101 177,9	100,0
Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների	108 088,3	-	108 088,3	108 088,3	100,0
Այլ վարձատրություններ	86 785,6	-	86 785,6	86 784,6	100,0
Ծառայությունների եվ ապրանքների ձեռքբերում	195 236,8	(24 743,1)	170 493,7	150 084,2	88,0
Տեսչական վերահսկողության շրջանակում սննդամթերքի	34 697,4	9 850,0	44 547,4	40 613,6	91,2
Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների, կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի վերահսկողության	326 223,0	-	326 223,0	278 021,7	85,2
Դաբաղ հիվանդության դեմ պատվաստումների իրականացման	20 260,0	-	20 260,0	20 260,0	100,0
Գյուղ. մշակաբույսերի և բույսերի պաշտպ. միջոցների վեր-ն լաբ	27 810,0	-	27 810,0	27 810,0	100,0
Կենդանական ծագման մթերքում մնացորդային նյութերի	55 825,0	-	55 825,0	55 825,0	100,0
Ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի տեղափոխման և ոչնչացման ծառայություններ	-	48 074,1	48 074,1	3 621,1	7,5
Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություններ	-	9 941,5	9 941,5	8 167,2	82,2
Բուսական ծագման մթերքում մնացորդային նյութերի	-	45 000,0	45 000,0	39 731,7	88,3
Նախորդ տարիների պարտավորությունների մարման նպատակով	-	26 192,1	26 192,1	26 183,2	100,0
ՍԱՏՄի տեխնիկական հագեցվածության բարելավում	43 228,0	(1 148,1)	42 079,9	37 688,6	89,6


Չնայած այն հանգամանքին, որ ինչպես նշված է վերոգրյալ ՍԱՏՄ-ի կառուցվածքը նկարագրող բաժնում, ՍԱՏՄ-ի անձնակազմի համալրվածությունը 2024թ-ի համար եղել է մոտ 83 տոկոս, տարեկան բյուջեի 100 տոկոսանոց կատարողականներ արձանագրվել են հենց անձնակազմի վարձատրության և դրան հավասարեցված վճարների համար նախատեսված բյուջեների ծախսային հոդվածներում: Իսկ ամենացածր կատարողական տոկոսները

արձանագրվել են ընթացիկ տարում վերանայված, ավելացված հոդվածների բյուջեներում (7,5%; 82,2%; 88,3% և այլն):

Ստորև մի քանի ծախսային հոդվածների համեմատական ցուցանիշները՝ **պլանավորված/ճշտված/կատարված** (կատարողական) տրամաբանությամբ:

Գծապատկեր_5

Բյուջեի ծախսային խմբերը/կատարողականը, որոնք փոփոխվել են ընթացիկ տարում



5. ՍԱՏՄ Վերահսկողություն (ստուգումներ, դիտարկումներ):

Հայաստանում գործող վեց տեսչական մարմինների հիմնական գործառույթը դա վերահսկողությունն ու կանխարգելումն է, մարդկանց անվտանգությունն ապահովելն է ըստ տվյալ տեսչական մարմնի ոլորտային լիազորությունների և նպատակների:

ՍԱՏՄ-ն, իր հաջորդ տարվա բյուջետային հայտից բացի հաստատում է հաջորդ տարվա ստուգումների ծրագիրը և հրապարակում այն մինչև դեկտեմբերի 1-ը: Որտեղ ընդգրկված են լինում այն տնտեսավարողները, որոնք ՍԱՏՄ-ի լիազորությունների շրջանակում, նախորդ տարի վաստակել են բարձր ռիսկային միավորներ:

Բացի տարեկան պլանային ստուգումներից ՍԱՏՄ-ն իրականացնում է դիտարկումներ, ՀՀ ներմուծվող և արտահանվող սննդամթերքի՝ այդ թվում մսամթերքի հսկողություն, ինչպես նաև ահազանգերի հիման վրա ըստ անհրաժեշտության ստուգումներ: Ինչպես նաև նախորդ տարվա արդյունքների հիման վրա տրված կարգադրագրերի հիման վրա վերստուգումներ:

ՍԱՏՄ-ի ստուգումների ցուցակում ընդգրկվելու տնտեսավարողների ռիսկային ցուցանիշները սահմանված են ՀՀ կառավարության թիվ 1687 2019թ-ի նոյեմբերի 28-ի որոշմամբ⁶:

Տնտեսավարողների ռիսկայնության աստիճանը՝ որով և որոշվում է դրանց հայտնվելը ցուցակում, հաշվարկվում է անհատական և ոլորտային ռիսկով, վերջինիս առավելագույն միավորը 100 է:

Ուշադրության է արժանի, որ ՍԱՏՄ-ին վերապահված ոլորտներում վերոհիշյալ 1687 որոշմամբ սահմանված ռիսկայնության չափորոշիչների համաձայն, մասմթերքի արտադրությանը վերաբերող ոլորտները **դասակարգված են բարձր 100 առավելագույն** միավորներով, իսկ ներմուծվող մսաթմթերքի ոլորտներում գործող տնտեսավարողները 50-80 միավորների միջակայքում են:

Ռիսկային ոլորտներն ըստ բարձր միավորների (մասմթերք)՝

Աղյուսակ_5

Հ/Հ	ՏԳՏԴ ծածկագիր	Գործունեության տեսակը	Միավորը
1	C10.1	Թարմ մսի կամ կենդանիների ներքին օրգանների (կամ ենթամթերք) արտադրություն, վերամշակում, պահածոյացում	100
2	A01.4	Անասնաբուծություն	90
3	71.20.5	Սպանդանոցներ	100
4	G46.23	Կենդանիների մեծածախ և մանրածախ առևտուր	50
5	H49.41	Կենդանի, կենդանական ծագման հումքի, կենդանական ծագման կողմնակի արտադրանքի ավտոճանապարհային փոխադրում	50

2024թ-ի համար ՍԱՏՄ-ն պլանավորել էր իրականացնել 912 պլանային ստուգում, սակայն փաստացի իրականացրել է 644-ը: Չնայած դրան, որ բացի պլանայինից, իրականացրել է նաև թվով 234 արտապլանային ստուգում, 193 վերստուգում:

⁶ <https://www.arlis.am/hy/acts/136772/latest>

2024թ-ի ընթացքում	Տարեկան պլանավորված	Փաստացի իրականացված
Տարեկան պլանավորված ընդհանուր ստուգումներ	912	644
որից՝		
Ստուգվող մասնաձևերը ներմուծող տնտեսավարողների քանակ		
որից՝		
Հավի միա ներմուծող տնտեսավարողների քանակ		33
Տավարի միա ներմուծող տնտեսավարողների քանակ		32
Խոզի միա ներմուծողների քանակ		32
այլ մասնաձևերը		23

Փաստացի իրականացված պլանային ստուգումների մեջ թվով 122-ը վերաբերվել է մասնաձևերը ներմուծող տնտեսավարողներին:

Ըստ ՀՀ ՊԵԿ-ին ուղղված հարցմանն ի պատասխան, ՀՀ մասնաձևերը ներմուծողների քանակը 2024թ-ին եղել է **299** տնտեսավարող: Իսկ վերը ներկայացված աղյուսակում ՍԱՏՄ-ի կողմից փաստացի իրականացված ստուգումների ցանկում թվով **120-ն** են եղել մասնաձևերը ներմուծողներ:

5.1. 2024թ-ի ստուգումներն ամփոփ թվերով:

2024 թվականին ՍԱՏՄ ստուգումների տարեկան պլանում ընդգրկված է 912 տնտեսավարող սուբյեկտներից փաստացի ստուգվել են 644-ը (ստուգման պլանի մոտ 71%-ը), որից 601-ի հայտնաբերվել են անհամապատասխանություններ (փաստացի ստուգվածների մոտ **93,3** %-ը), կազմվել են տուգանքի որոշումներ: Միայն 42 տնտեսավարողների մոտ խախտումներ չեն հայտնաբերվել (փաստացի ստուգվածների մոտ **6,5%**-ը):

Բացի պլանային ստուգումներից ՍԱՏՄ-ն 2024թ-ի ընթացքում իրականացրել է նաև ոչ պլանային 427 ստուգում, որից 246-ի մոտ խախտումներ չեն հայտնաբերվել, իսկ 181 տնտեսավարողի նկատմամբ կազմվել են տուգանքի որոշումներ (ստուգվածների 42%-ի մոտ):

Հաշվի առնելով, որ ոչ պլանային ստուգումներն հիմնականում իրականացվում են կամ բողոքի հիմքով, կամ **արդեն նախորդ տարի ստուգում իրականացված** և խախտումները վերացնելու մասին կարգադրագրեր տված տնտեսավարողների մոտ, ապա ոչ պլանային ստուգումների մոտ 42 տոկոսի մոտ խախտումներ հայտնաբերելը ևս համարվում է բարձր ռիսկային ցուցանիշ:


Համեմատական թվերով, ելնելով ՍԱՏՄ-ի 2024թ-ի տարեկան հաշվետվությունում⁷ առկա տվյալներից, 2022-23թթ-ին ևս բարձր տոկոս է կազմել տարեկան պլանային ստուգումներով հայտնաբերված խախտումներով գործող տնտեսավարողների քանակը:

2023 թվականին փաստացի իրականացված ստուգումները կազմել են տարեկան պլանավորվածի 88.7%, խախտումներ հայտնաբերվել են ստուգվածների 95.9%-ի մոտ:

2022 թվականին ՍԱՏՄ-ի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված է եղել 945 տնտեսավարող սուբյեկտ, որից փաստացի իրականացված ստուգումները կազմել են 81.8%-ը: Փաստացի պլանավորված ծրագրից ստուգվածների 97,7 %-ի մոտ հայտնաբերվել են խախտումներ, կայացվել են տուգանքի որոշումներ:

ՍԱՏՄ տարեկան պլանավորած և դրանցից իրականացված ստուգումների և դրանց արդյունքում հայտնաբերված խախտումներ՝ 2022/23/24 թթ-ի համեմատական:

Գծապատկեր_6



2024 թվականի ընթացքում կայացվել է վարչական տուգանք նշանակելու մասին 1,285 որոշում, նշանակվել է 182,935,000 մլն դրամի չափով տուգանք: Պետական բյուջե վճարվել է 103,145,000 ՀՀ դրամ

5.2. Հաճախ հանդիպող խախտումներ:

Ըստ ՍԱՏՄ 2024թ-ի տարեկան հաշվետվության տվյալների, այս փաստադրյալում ամփոփ ներկայացվում է նաև ՍԱՏՄ-ի կողմից իրականացված այլ՝ ոչ պլանային ստուգումներ, վերահսկողական մյուս միջոցառումների մասին տվյալներ: Դրանք իրականացվել են ՍԱՏՄ-ի

⁷ [Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին - Հաշվետվություն](#)

լիազորությունների շրջանակի ըստ ոլորտների՝ սննդամթերքի անվտանգություն, անասնաբուծություն, բուսասանիտարիա և այլն:

Մասնավորապես, 2024թ-ի ընթացքում ՍԱՏՄ-ի կողմից իրականացվել է 826 դիտարկում, որից 96-ի մոտ հայտնաբերվել են անհապատասխանություններ:

Բուսասանիտարիայի ոլորտներում իրականացվել է 147 դիտարկում, հայտնաբերվել է 43 անհամապատասխանություն (29%):

Անասնաբուծության ոլորտում, իրականացվել է 1971 անասնահամաճարակային մշտադիտարկում, 299 մսի իրացմամբ զբաղվող տնտեսավարողների մոտ հայտնաբերվել են խախտումներ:

2024թ-ի ընթացքում կառույցի թեժ գիծ ծառայությունով ստացվել է 663 ահազանգ, 6-ը սննդամթերքի թունավորման դեպքերով:

ՀՀ Առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնից (ՀՎԿԱԿ) ստացված 6 թունավորման դեպքի վերաբերյալ գրությունով (թունավորվածների ընդհանուր թիվը՝ 37) ստուգումներ են բացվել 7 հանրային սննդի կազմակերպությունում և 1 արտադրություն/իրացում: Արդյունքում 6 տնտեսավարողի մոտ հայտնաբերվել են խախտումներ, որից 4-ի գործունեությունը կասեցվել է, 2 տնտեսավարող խախտումները վերացրել է ստուգման ընթացքում:

Ուսումնասիրվել են «Թեժ գիծ» հեռախոսակապով ստացված, ԶԼՄ-ներում, սոցիալական ցանցերում հրապարակված բողոքները, ամփոփվել են դրանց վերաբերյալ ոլորտային վարչությունների ներկայացրած մասնագիտական դիրքորոշումները, որոնց ամփոփումից հետո ձեռնարկվել են վերահսկողական գործողություններ:

Մասնավորապես ստացված 344 բողոքից, 243-ի մասով իրականացվել են վերահսկողական միջոցառում, որից 214 ստուգում, 38 դիտարկում: Բողոքներից 23-ը վերահասցեագրվել են, 54-ին պարզապես տրվել է մասնագիտական պարզաբանում:

Վերը նշված, իրականացված 243 վերահսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել են թվով 110 խախտումներ՝ մոտ 45%-ը: Հայտնաբերված անհամապատասխանությունները մեծամասամբ վերաբերել են սանիտարահիգիենիկ պայմաններին, ժամկետանց և մակնշման խախտումներով սննդամթերքի առկայությանը:

5.3. Ռիսկերի գնահատում կառավարում և վերլուծություն:

Բացի վերոգրյալ ներկայացված ստուգումների տարեկան ծրագրի ձևավորման ռիսկերի մեթոդաբանության, որով ձևավորվում է ամեն հաջորդ տարվա համար նախատեսված սննդամթերքի վերահսկողության ոլորտի տնտեսավարողների ընտրությունը ստուգումների տարեկան պլանում ընդգրկվելու համար, առկա է նաև ընդհանուր առմամբ սննդամթերքի

անվտանգության, բուսասանիտարիայի և անասնաբուժության ոլորտների երկրի համար կարևոր ռիսկերի կառավարման խնդիր:

Այս մասին ևս անդրադարձ կա ՍԱՏՄ տարեկան հաշվետվությունում: Որտեղ ոլորտի ռիսկերի կառավարման, գնահատման և վերլուծության տեսանկյունից, որպես ռիսկի գնահատում նշվում է, որ համաձայն գործող օրենսդրության, **«Հ կառավարությունը պետք է նշանակի ոլորտի գիտական կենտրոններ»**, որոնց հետ ՍԱՏՄ-ն պետք է հաղորդակցվի և դուրս բերի երկրի համար առաջնային ռիսկերը: Հետևաբար նշվում է նաև այս բացը, որ ՀՀ կառավարությունը չի նշանակել ոլորտային գիտական կենտրոններ: Որը կարևոր է ընդհանուր մեր երկրում մարդու կյանքի և առողջության ապահովման նպատակով՝ սննդամթերքի անվտանգությանը սպառնացող ռիսկերի նպատակային և թիրախային գնահատման և ինչու ոչ, նաև կառավարման համար ապահովել հաղորդակցումը գիտական կենտրոնների և ՍԱՏՄ-ի միջև:

Ռիսկերի մյուս մասը, որը վերաբերվում է հիմնականում վերլուծությանն ու կառավարմանը, նշված է երեք հիմնական խնդիր՝

1. Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ ծրագրային տեղեկատվական բազայի բացակայություն,
2. Սննդի շղթայում ընդգրկված սննդի շղթայի օպերատորների գրանցում,
3. Սննդի շղթայի օպերատորների վերաբերյալ տեղեկատվության ամբողջականություն:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ վերջին երեք կետերում նշված խնդիրները որպես մեր երկրում սննդամթերքի շղթայի ռիսկերի վերլուծության և կառավարման խնդիրներ, **նշված են նաև ՍԱՏՄ-ի 2023թ-ի տարեկան հաշվետվությունում**, համարյա թե նույնական:

6. Վերահսկողություն: Թռչնամիս

Ինչպես նշված է այս փաստաթղթի ներածական մասում, ընդհանրական սննդի անվտանգության վերահսկողության և բյուջետային հատկացումների մասին անդրադարձից բացի, որպես առանձին սննդամթերքի մեկ խումբ, վերլուծության առարկա է դարձել թռչնամիսը: Հաշվի առնվել նաև այն, որ Հայաստանում թռչնամիսը ոչ միայն նվազագույն սննդային սպառման ապրանք է, այլ նաև քաղաքականապես զգայուն ապրանքային խումբ, քանի որ մեր երկրում ներմուծումից բարձր կախվածությունը հանգեցնում է արտաքին գնային, լոգիստիկ և սանիտարական ռիսկերից բխող խոցելիության: Հաշվետվությունը դիտարկում է թռչնամսի շուկան ոչ միայն որպես տնտեսական, այլ նաև որպես սննդային անվտանգության և ինստիտուցիոնալ հզորությունների ցուցիչ:

6.1. Թռչնամիս ներմուծում:


Համեմատության համար վերցրել ենք ՀՀ վիճակագրական կոմիտեի պարենային հաշվեկշիռը⁸, ըստ որի ներմուծվող և տեղական արտադրվող որոշ խմբերի մսամթերքի բալանսը խիստ բացասական է:

Աղյուսակ_7

Հ/Հ	2021 Արտադրված հազ տոննա	2021 Ներմուծված հազ տոննա	2022 Արտադրված հազ տոննա	2022 Ներմուծված հազ տոննա
Թռչնի միս	14.6	40.4	14.1	42.0
Տավարի միս	69.4	6.5	63.9	8.1
Խոզի միս	15.8	14.3	14.9	17.3

Այս տվյալներն ուսումնասիրելիս արձանագրում ենք, որ բացի տավարի մսից, Հայաստանը խիստ կախվածություն ունի մսամթերքի ներմուծումից, իսկ թռչնամսի դեպքում մոտ երեք անգամ:

Գծապատկեր_7



Հայաստանի պարենային համակարգում մսամթերքի, հատկապես թռչնամսի, ներմուծումից կախվածությունը ստեղծում է մի շարք ստրատեգիական, տնտեսական, սոցիալական և անվտանգային խնդիրներ, որոնք պետք է դիտարկվեն ոչ միայն առևտրային հաշվարկով, այլ նաև որպես պետական կայունության և սննդային անվտանգության հարց:

Առանձին տվյալներ կան նաև սահմանային հսկողությանը վերաբերող գործառույթներին և հղումներ են արված ՍԱՏՄ-ի պաշտոնական կայքում պարբերաբար հրապարակվող տվյալներին:

⁸ https://armstat.am/file/article/f_sec_4_2024_3.pdf

Թռչնամիսը ինչպես աշխարհում, այնպես էլ Հայաստանում հանդիսանում է բարձր սպառման ապրանք, և դրա գների կայունությունն անմիջական ազդեցություն ունի.

- աղքատության մակարդակի վրա
- գնաճի վրա
- սպառողական զամբյուղի վրա

Ներմուծումից կախվածության դեպքում երկրում առաջանում են առնվազն հետևյալ ռիսկերը.

✓ **Գների արտաքին կախվածություն.**

Գները որոշվում են ոչ թե ներքին մրցակցությամբ, այլ արտահանող երկրների՝ արտադրական ծախսերով, սուբսիդիաների քաղաքականությամբ, տարադրամային տատանումներով առևտրային սահմանափակումներով և այլն:

✓ **Առողջապահական և որակական ռիսկեր**

Ներմուծված թռչնամիսը հաճախ ունի ավելի երկար պահեստավորման շրջան, սառեցման ու հալվելու ցիկլեր, հավելյալ պրոցեսինգ հակաբիոտիկների և հավելումների օգտագործման ռիսկեր:

✓ **Մրցակցության վնասում և տեղական արտադրության անկում.**

Երբ շուկայում գերակշռում են ներմուծողները, տեղական արտադրողը չի կարող մրցել, քանի որ արտաքին շուկաների մասշտաբը շատ ավելի մեծ է, հաճախ ներքին շուկայում չկա սուբսիդավորման բավարար աջակցություն, ծավալները փոքր են և այլն:

Արդյունքում ներքին շուկայում մնում է սպառվող ներմուծված ապրանքը, բայց ոչ արտադրողը: Սրա հետևանքները երկարաժամկետում լուրջ վնաս է, իսկ դրա հետևանքները վերականգնելը շատ ավելի դժվար է, քան պահպանելը սեփական արտադրողին:

6.2. Ներմուծման ռիսկեր: ՍԱՏՄ վերահսկողություն

Սահմանային հսկողություն իրականացնելիս ՍԱՏՄ-ն առաջնորդվում է ՀՀ կառավարության թիվ 218-Ն (*Ներմուծվող սննդամթերքի ռիսկայնության հիման վրա հսկողության մեթոդաբանությունը...*) որոշմամբ⁹ սահմանված ռիսկային չափորոշիչներով, որտեղ նույն վերոգրյալ ստուգումների ռիսկերի տրամաբանությունն է ներդրված՝ անհատական, ոլորտային, ներմուծվող ծավալների և այլ չափորոշիչներից կախված ռիսկային միավորներ: Ըստ այդմ, թռչնի միսը (ԱՏԳԱԱ 0207) դասվում է բարձր ռիսկային՝ 17 միավոր վաստակող սննդամթերքի խմբի ապրանք:

⁹ <https://www.arlis.am/hy/acts/194196/latest>

Վերոհիշյալ սահմանային հսկողության ռիսկայնության չափորոշիչներում բարձր ռիսկայնության միավոր է վաստակում նաև փոխադրամիջոցների պայմանների անհամապատասխանությունները, սննդամթերքի տվյալ տեսակի փոխադրմանը ներկայացվող պահանջների պահպանումը, ինչպես նաև ամենաբարձր 20 ռիսկային միավոր է վաստակում արագ արձագանքման միջազգային համակարգերի, այլ երկրների լիազոր մարմինների հաղորդումները՝ տվյալ ներմուծվող ապրանքային խմբերի համար:

Չափազանց կարևոր ինֆորմացիոն ռեսուրս է ՍԱՏՄ-ի պաշտոնական կայքում հրապարակումները «Սահմանային վերահսկողություն» բաժնում, որտեղ ներկայացված են՝

- ✓ Հայտնաբերված անհապատասխանություններ
- ✓ Չթույլատրված բեռներ
- ✓ Բուսասանիտարական ենթահսկման բեռներ

Սակայն, ինչպես ներմուծված թռչնամսի, այնպես էլ այլ բեռների դեպքում 2024թ-ին վերաբերելի տվյալները, այս փաստաթղթի ամփոփման պահին դեռևս լրացված չէին:

Ըստ ՍԱՏՄ հրապարակված տվյալների¹⁰, **2024թ-ի հունվար-հոկտեմբեր** ամիսների ընթացքում ՀՀ ներմուծվող թռչնամսից սահմանային հսկողության արդյունքում հայտնաբերվել է անհապատասխանություններ **516,678** կգ թռչնամսի խմբաքանակների դեպքում: Որից ամենաշատը հայտնաբերվել են Բրազիլիայից ներմուծումների խմբաքանակների դեպքում՝ **231,092** կգ:

Դիտարկվող ժամանակահատվածում, ախտածին մանրէներով պայմանավորված սահմանային վերահսկողության արգելված քանակներով առաջատար է ԱՄՆ-ից ներմուծված թռչնամիսը՝ 52,969 կգ (տես Աղյուսակ_9):

Աղյուսակ_9

Երկիրը	Խոնավության զանգվածային մաս ցուցանիշով պայմանավորված	ԱՅԼ հիմքով: <i>ախտածին մանրէներ, սալմոնելա, լիստերի եվ այլն:</i>
Բրազիլիա	222,188 կգ	8,904 կգ
ԱՄՆ	103,153 կգ	52,969 կգ
Ռուսաստան	100,864 կգ	-
Իտալիա	-	25,000 կգ
Իրան	3,600 կգ	-

¹⁰ <https://www.snund.am/hy/page/haytnabervats-anhamapataskhanvouthyvounner/248>

6.3. Արտաքին կախվածություն և պարենային անվտանգություն

Թռչնամսի արտադրությունն ու վաճառքը վերջին շրջանում դասվում է պարենային ապրանքների այնպիսի խմբին, որոնց նկատմամբ աշխարհում արդեն նկատվում են.

- արտահանման արգելքներ
- սահմանափակումներ
- լոգիստիկ խափանումներ և այլն:

Օրինակ: *COVID-ի ժամանակ և Ուկրաինայի պատերազմի ընթացքում շատ երկրներ սահմանափակեցին թռչնամսի արտահանումը, ինչի հետևանքով Հայաստանի շուկան կարճ ժամկետում **հայտնվեց խոցելի** վիճակում:* ԵՄ-ում և ԱՄՆ-ում (Բրազիլիայում, որպես խոշոր թռչնամիս արտահանող երկիր, սուբսիդավորվում է ընդհանուր գյուղատնտեսական ծրագրերով) թռչնամսի արտադրությունն այսօր բարձր սուբսիդավորված է, և արտադրողները գործում են մեծ ծավալներով, ինչը ավելի դժվարացնում ինքնուրույն մրցակցությունը այս ոլորտում գործող տնտեսավարողի համար՝ առանց պետական քաղաքականության:

Մասնաթերքի ներմուծումը 2022/23/24թթ-ին բոլոր տեսակների գծով աճ է արձանագրվել (տես Աղյուսակ_8 (տոննա)):

Աղյուսակ_8

Հ/Հ	2022	2023	2024
Թռչնի միս	38 362.2	38 783.4	40 983.2
Տավարի միս	4 978.4	4 503.4	5 631.3
Խոզի միս	11 390.8	11 123.6	13 047.5

Այսօր աշխարհում աճում է քաղաքականությունը, որը կոչվում է՝ “**food nationalism**” (տես FAO The State of Agricultural Commodity Markets (SOCO 2022))¹¹ այսինքն՝ պարենի պահպանումը սեփական շուկայի համար: Հայաստանը չունի այնպիսի ծավալների ներքին արտադրություն, որը կարողանա փոխել այդ արտաքին ճնշումը:

Երբ տվյալ երկիրը, որը կորցնում է ներքին պարենային արտադրությունը, բացի կախվածությունից, կորցնում է նաև՝ տեխնոլոգիա, մարդկային կապիտալ, արտադրական հմտություններ, շուկայի կառավարման ունակություն:

¹¹ <https://openknowledge.fao.org/items/d1b79b7b-d2fb-469b-abd7-d357e7452744>

6.4. Թռչնամսի ինքնաբավություն: Միջազգային փորձ

Այս փաստադրժի մշակման շրջանակներում, որպես համեմատական երկրներ են վերցվել հարևան Վրաստանը եվրոպական երկու երկրներ զարգացվածության տարբեր մակարդակների՝ Լեհաստանն ու Լիտվան:

Համեմատությունները նույնպես արվել են ՆԵՐՄՈՒԾՈՒՄ/ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ տրամաբանության շրջանակներում, որը նաև առիթ է տալիս դիտարկելու տվյալ երկրի ինքնաբավության մակարդակը թռչնամսի մասով:

Դիտարկվող երկրների շարքում ամենաինքնաբավը Լեհաստանն է 150 տոկոս ցուցանիշով:

Լեհաստանը հանդիսանում է ԵՄ-ի խոշորագույն թռչնամիս արտադրող և արտահանող երկրներից մեկը: Տեղական ինքնաբավության մակարդակը գերազանցում է 150%-ը. արտադրության զգալի մասը արտահանվում է ԵՄ և երրորդ երկրների շուկաներ: Լեհաստանում օպերացիոն մոդելը հիմնված է ինտենսիվ, ինտեգրացված արտադրության շղթայի, բարձր կենսաանվտանգության ստանդարտների և լաբորատոր բարձր կարողությունների վրա: Սննդի անվտանգության վերահսկողությունը ուժեղապես ինտեգրված է ԵՄ համակարգին:

Լիտվա

Լիտվան համեմատաբար փոքր, սակայն ինքնաբավ և մասամբ արտահանող շուկա է, որի ինքնաբավության մակարդակը մոտ կամ ավել է 110 տոկոսից: Շուկան ինտեգրված է ԵՄ ընդհանուր շուկայի մեջ, իսկ սննդի անվտանգության վերահսկողությունը և լաբորատոր համակարգերը գործում են ԵՄ միասնական ստանդարտների համաձայն: Թռչնամիսը ոչ միայն ներքին սպառման, այլ նաև արտահանման ապրանք է:

Վրաստան

Վրաստանը, ինչպես Հայաստանը, հանդիսանում է ներմուծումից կախված շուկա, սակայն մի փոքր ավելի լավ հարաբերակցությամբ: Ինքնաբավության մակարդակը գնահատվում է մոտ 30–35%, մնացած մասը լրացվում է ներմուծումներով: Վրաստանում նույնպես ընթանում են սննդի անվտանգության վերահսկողության բարեփոխումներ, սակայն ինստիտուցիոնալ կարողությունները և լաբորատոր ենթակառուցվածքները դեռևս ամրապնդման կարիք ունեն: Թռչնամիսը այստեղ նույնպես հանդիսանում է սոցիալ տնտեսական կարեւոր ոլորտ՝ սննդային անվտանգության տեսանկյունից:

Հայաստան

Հայաստանը համեմատական այս խմբում ունի ամենացածր ինքնաբավության մակարդակներից մեկը (մոտ 28–30%) և բարձր ներմուծման կախվածություն: Սա նշանակում է, որ Հայաստանի վրա ավելի ինտենսիվ են ազդում արտաքին ցնցումները՝ սանիտարական

բնույթի (օրինակ՝ հիվանդությունների բռնկում արտադրող երկրներում), թե՛ գնային և լոգիստիկ բնույթի:

Ինքնաբավությունն ըստ երկրների՝

Երկիր	Ինքնաբավություն (%)	Ներմուծման բաժին (%)
Լեհաստան	150	0
Լիտվա	110	0
Վրաստան	32	68
Հայաստան	28	72

7. Խնդիրներ/Առաջարկներ

Ստորև դուրս են բերվել այս փաստաթղթի շրջանակներում ուսումնասիրված, փաստաթղթի մշակման վրա աշխատած փորձագետների առաջարկները, որոնք ամենաին չեն վերաբերվում Հայաստանում սննդի անվտանգության վերահսկման ողջ շղթային և/կամ պարենային անվտանգությանը վերաբերող ամբողջ սպեկտրի խնդիրներին:

7.1. Բյուջեին վերաբերող:

1. Ինչպես ՀՀ-ում գործող վեց տեսչական մարմինները, այնպես էլ ՍԱՏՄ-ի դեպքում հաջորդ տարվա տարեկան բյուջեն հաստատվում է տվյալ տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից և ներկայացվում ՀՀ կառավարության աշխատակազմ, հետագայում ՀՀ ֆինանսների նախարարություն: Օրինակ ՍԱՏՄ-ի դեպքում, երբ կառավարման խորհուրդը հաստատել էր բյուջեն 2023թ-ի նոյեմբերի 30-ին, իսկ կառավարությունն արդեն նույն օրով ուղարկել ՀՀ ԱԺ ընդհանուր ՀՀ բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկման, ակնհայտ է դառնում, որ կառավարման խորհրդի որոշումը կրել է ավել շատ ֆորմալ բնույթ և տեսչական մարմինների պետություն-մասնավոր հատված համատեղությամբ գործող խորհուրդները ավելի ներառական չեն:
2. Արդեն ընթացիկ տարում տարբեր գերատեսչություններ փոփոխում են իրենց բյուջեները ավելացնում/պակասեցնում, որը երբեմն կրում է նաև տարերային և ոչ խորը մտածված որոշումների բնույթ: Օրինակ ՍԱՏՄ-ի դեպքում արդեն ընթացիկ 2024թ-ին բյուջեն ավելացել էր մոտ 150 մլն դրամով, որից զգալի մասը այդպես էլ տարեվերջին կատարողականով չէր իրացվել, իր նպատակին չէր ծախսվել:

3. Եթե դիտարկենք ընդհանուր ՀՀ պետական բյուջեի մասին 2024թ-ի համար ընդունված օրենքը, ապա այն արդեն ընթացիկ տարում փոփոխվել է մոտ 200 անգամ: Սա ևս խոսում է այն մասին, որ նախորդ տարվա վերջին ավելի երկար և բավարար ժամանակ չի հատկացվում հաջորդ տարվա բյուջետային հայտը մշակելու համար: Մանավանդ, եթե հաշվի առնենք, որ 2024թ-ը չի եղել ֆորսմաժորային երևույթներով պայմանավորված տարի և վերոհիշյալ փոփոխությունները պայմանավորված չեն եղել արտակարգ իրավիճակներով և այլն:
4. ՍԱՏՄ-ի բյուջեի կատարողականը ուսումնասիրելիս, արդեն նշվեց վերոգրյալ, որ ամենացածր կատարողականը՝ 7,5% արձանագրվել է բյուջեի ծախսային այն հոդվածով, որը փոփոխվել էր արդեն տարեկան բյուջեի ընդունումից հետո և այդ հոդվածի բյուջեն ավելացվել էր արդեն ընթացիկ տարում:
Իսկ բարձր կատարողականով ծախսային հոդվածը եղել էր աշխատավարձերի և դրան հավասարեցված վճարների գծով բյուջեն՝ 100%: Սա այն դեպքում երբ ՍԱՏՄ-ի հաստիքացուցակով հաստատված աշխատակազմը համալրված է եղել 83%-ով:
Այս երևույթը նկատվում է համարյա թե բոլոր գերատեսչություններում, որտեղ աշխատանքի վարձատրությունների բյուջեն, անկախ համալրվածության աստիճանից, բաշխվում է ավելի քիչ անձնակազմով կազմին պարգևավճարների տեսքով: Կանկրետ տեսչական մարմինների դեպքում խնդիր կա նաև դրույքային աշխատավարձերի անհամադրելի լինելը ՀՀ ՊԵԿ տեսուչների հաստիքային դրույքների հետ, որը կարծում ենք շատ ավելի ազնիվ ճանապարհ կլիներ, որպեսզի բարձրացվեն տեսչական մարմինների տեսուչների դրույքային աշխատավարձերը, որի արդյունքում կբարձրանա նաև տեսչական մարմիններ դիմելու և հաստիքները համալրելու, ինչպես նաև պլանավորված ստուգումներն իրականացնելու արդյունավետությունը:

7.2. Սննդի վերահսկողություն: Թռչնամիս

1. ՍԱՏՄ-ի վերահսկողական գործառույթների մասով, կարծում ենք, որ անհրաժեշտություն կա վերանայելու կառավարության կողմից սահմանված ռիսկերի չափորոշիչները, որոնցով ձևավորվում են ՍԱՏՄ-ի տարեկան ստուգումների ծրագիրը: Որպեսզի այդ ծրագիրը լինի ավելի իրատեսական և նախօրոք հաստատված ստուգումների պլանը իրականացվի 100 տոկոսով:
2. ՍԱՏՄ-ի ստուգումներին վերաբերող ռիսկերի չափորոշիչները վերանայման են ենթակա նաև այն տեսանկյունից, որ ներքին մասմթերք արտադրողն ունի ավելի բարձր ռիսկային միավորներ վաստակելու կարգ, քան ներմուծողը: Այն առնվազն պետք է հավասարեցվեցի, կամ ներքին արտադրողին դիրքերն ավելի բարելավվի:

3. ՍԱՏՄ-ի պաշտոնական կայքում, այս փաստաթղթի մշակման փուլու, տեղադրված սահմանային հսկողության 2024թ-ի միայն հունվար-հոկտեմբեր ամսիների ընթացքում ՍԱՏՄ-ի սահմանային հսկողության միջոցառումների արդյունքում արգելված բեռների՝ այդ թվում թռչնամսի ներմուծումները, ծագման երկրները և չափաքանակները: Կարծում ենք, որ այս ինֆորմացիան պետք է շարունակական լինի և այդ տեղեկատվությունը հրապարակվի հանրության համար անդադար: Այն նաև անուղղակի ձևով կխրախուսի տեղական արտադրանքը գնելու և վստահությունը բարձրացնելու տեսանկյունից:

4. Պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, (այս փաստաթղթից ելնելով պարենային անվտանգության մեծ խնդրից անդարադարձ է արվել միայն թռչնամսի ներմուծումից կախվածությամբ) թռչնամսի արտադրության ինքնաբավությանը հասնելը, կարծում ենք որ ՀՀ-ի գյուղատնտեսության ոլորտի քաղաքականության պատասխանատուների համար առաջնային վերափոխման ուղղություններից պետք է լինի: Մասնավորապես այս փաստաթղթի մշակման պահին Հայաստանը թռչնամսի 28 % -ոց ինքնաբավության մակարդակից պետք է ձգտի հասնելու առավելագույն բարձր ինքնաբավության մակարդակի: Այդ տեսանկյունից չափազանց կարևոր են թռչնամսի արտադրություններ հիմնելու աջակցության, հարկերի և վարկերի սուբսիդավորման հասցեական նոր պետական գործիքներ ներդնելը:

5. Վերահսկողության տեսանկյունից ուշադրության է արժանի, թե տարեկան պլանային ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների բարձր տոկոսային մասնաբաժինը և թե բողոքների հիմքով ՍԱՏՄ-ի կողմից իրկանացված ստուգումների շնորհիվ բացահայտված խախտումների չափը: Հաշվի առնելով որ այս տեսչական մարմնի ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությունը ներդրվել է 2019թ-ին, իսկ այդ պահին առկա չէր նախկինում արված ստուգումների վիճակագրական խորը տվյալների բազա, ապա հիմա, առնվազն վերլուծելու և նոր մոտեցումներ ներդնելու համար առկա են արդեն հինգ տարվա արդյունքներ և դրանց հիման վերլուծական բազա: Կարծում ենք այդ տվյալների հիման վրա հնարավոր կլինի ավելի հասցեական և ավելի անվտանգ սննդի շղթա պահովելու գործիքակազմ ներդնել ՍԱՏՄ-ի համար:

6. Ուշադրության է արժանի, ՍԱՏՄ-ի կողմից իրենց տարեկան հաշվետվություններում առկա ռիսկերի մասին անդրադարձը: Որտեղ նշվում է սննդի ոլորտի ռիսկերն ավելի մեղմելու սեփական առաջարկները՝ այդ թվում այն մասը որ ՀՀ կառավարությունը պետք է նշանակի ոլորտի գիտական կենտրոններ, որոնց հետ ՍԱՏՄ-ն պետք է հաղորդակցվի և դուրս բերի երկրի համար առաջնային ռիսկերը (այս մասին անդրադարձ կա ՍԱՏՄ-ի 2023 և 2024թթ-ի տարեկան հաշվետվություններում):